

առ Ասորիս թղթոց միջոցին մէջ ծանօթացաւ Հայոց կաթողիկոսին առ մեր հանգանակը, եւ ան ալ՝ Ասորոց ձեռքը :

Հայ բնագրին մէջ չենք գտներ բան մը՝ որն որ ապացուցանէ թէ անթիւնիկան կերպով յունականէն թարգմանուած է. մանաւանդ թէ, ինչպէս նշանակեցինք, «էութիւն», բառին ընտրութիւնն բառով փոխանակուելը կ'ստիպէ զմեզ ասոր պատճառն ասորական բնագրին մէջ փնտռելու : Թէ Ասորիք ան ատեն սոյն հանգանակը կը գործածէին, ասոր վրայ տարակոյս իսկ չի կրնար ըլլալ : Ունինք հիմայ ձեռքերնիս հայերէն թարգմանութեամբ թուղթ մը (գեռ-չհրատարակուած) զորն որ Ասորիք առ Վերսէս Ի Աշտարակեցի՝ Բարգենի յաջորդը՝ եւ առ Վերշապուհ Տարօնոյ եւ Մամիկոնեից եպիսկոպոս կը գրեն, որուն մէջ կրտեն ան անապականապաշտ Միաբնակները. «Մարգացաւ կատարեալպէս, մինչ էառ ի Առսէն մարմին ճշմարիտ եւ անձն (= հոգի) եւ միտս, չարչարեցաւ, խաչեցաւ եւ մեռաւ վասն մեր, որպէս եւ կամեցաւ, ստուգապէս եւ ոչ կարծեօք. եւ ապականութիւն բնութեան ոչ գտաւ ի նմա. զի մարմին որ ի մեզէն առ, անապականութիւն էր եւ փառաւոր ի նմանէ միութենէ, եւ նովին մարմնով յարեաւ եւ նստաւ ընդ աջմէ չօր» :

Ուստի Երբ դարուն սկիզբները ծանօթանալով Հայոց սոյն հանգանակը՝ մարդեղութեան վրայօք յուզուած խնդիրներուն առթիւ, կամաց կամաց ի կիրառութիւն առնուեցաւ եւ մի միայն տիրողն եղաւ, երբ որ քիչ մը ետքը մուծաւ «Աստարագամատուցի մէջ» Հառատ Նիկիտակոսն վերնագրով. անանկ որ բոլորովին մոռցրնել տուաւ զուտ Վիկիականն, ինչպէս առաջին յօդուածին մէջ տեսանք :

Վրանի մը տարիներէ հետէ ունինք Արտղի եւ Սահակայ Հայոց կաթողիկոսի թղթակցութիւնը (435ին) որն որ հայերէն ըստ մասին ձեռագրաց մէջ է եւ ըստ մասին տպուած : Արդ կրնայ համարուիլ թէ մեր նախնիթաց եղբակացութիւնն ի հիմանց կը տապալէ, երբ որ սոյն Սահակայ (441ին) առ Արտղ թղթէն ցուցուի որ աս հանգանակը մեր ըսած ատենէն առաջ Հայոց մէջ կը գործածուէր, որովհետեւ իրօք Սահակայ թղթոյն մէջ զուտ Վիկիական հանգանակէն ետքը մէկիկ մէկիկ կը յաջորդեն ան յաւելուածները՝ որոնք մեր առաջիկայ հանգանակին սեպհական են :

Աս ասանկ ըլլալով՝ անտարակոյս պիտ'որ ընկճէինք այսպիսի յիշատակարանի մը ծանրութեան տակ՝ որուն հարազատութեանը վրայ խնդիր իսկ չի կրնար ըլլալ, եթէ չհասնէր մեզի օգնութեան Վիկնական վանաց մատենադարանը երկու գրչադիրներով՝ որոնք կը պարունակեն համբաւաւոր Աւագրի վանականի († 399) մէկ

¹ Ըստ սովորական ժամանակագրութեան՝ հինգերորդ յաջորդն : Ծ. Հրտ. :